ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«02» 11 2018թ. N: 242 ք.Գյումրի

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 934-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 143-Ն հրամանի 177-րդ կետի պահանջներով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետներ Արտակ Հայրապետյանին և Սամվել Հարությունյանին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Առափիի միջնակարգ դպրոց», «Ջաջուռի միջնակարգ դպրոց» և «Քեթիի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություններում իրականացնել ֆինանսական աուդիտ, «Արևիկի միջնակարգ դպրոց» և «Զորակերտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություններում՝ համակարգի գնահատման աուդիտ:
2. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ Մ. Մուրադյանին:
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ Մ. Մուրադյանին՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքները իրականացնել 2018թ.նոյեմբերի 3-ից, 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Կ.ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է